

ՋԵԿՈՒՑԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՈՒԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2014թ. 1-ԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մուսալեռի գյուղապետարանը իր աշխատանքային գործունեությունը կազմակերպել է ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Ըստ բնագավառների իրականացվել են հետևյալ աշխատանքները

Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

Կատարել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առել քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները և ձեռնարկել է համապատասխան միջոցներ:

Միջոցներ է ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսվարող սուբյեկտների իրավունքները և օրինական շահերը:

Անձնագրային բաժնում, կադաստրի վաղարշապատի տարածքային ստորաբաժանումում բազմիցս հանդես է եկել համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով:

Հրավիրել և վարել է Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու թվով 5 նիստ: Արձակել է 21 կարգադրություն, ընդունել է 19 որոշում: Տրվել է 560 տեղեկանք: Ելից գրությունների թիվն է 130, մտից գրությունների թիվն է 104:

Ֆինանսների բնագավառում

Օրենքով սահմանված կարգով կազմակերպել է գույքահարկի՝ շինությունների 697 100դրամ /1-ին կիսամյակի պլանային ցուցանիշը 1 500 000դրամ/, փոխադրամիջոցների 2 111 500 դրամ /1-ին կիսամյակի պլանային ցուցանիշը 2 900 000դրամ/, հողի հարկի՝ 1 296 100 դրամ /1-ին կիսամյակի պլանային ցուցանիշը 2 900 000դրամ/, տեղական

տուրքերի՝ 252 200 դրամ /1-ին կիսամյակի 275 000 դրամ/ վարձակալական հողի վճարների՝ 0 դրամ /1-ին կիսամյակի պլանային ցուցանիշը 65 000 դրամ/ գանձումը:

Սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է դրամական օգնություն՝ 2 000 000 դրամ:

Գյուղապետարանը աշխատավարձի գծով պարտքեր չունի:

Պաշտպանության բնագավառում

Լրացվում է Մուսալեռի գյուղական համայնքի զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանը:

2014 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում գորացրվել է թվով 11 զինվոր: Նախատեսված է գորացրվածներին տրամադրել դրամական պարգև՝ յուրաքանչյուրին 20 000 դրամ:

Քաղաքաշինության և

հողօգտագործման բնագավառում

Սահմանված կարգով տրվել է համայնքի վարչական սահմաններում իրականացվող թվով 1 բնակելի տան շինության շինարարության թույլտվություն:

Անմիջական վերահսկողություն է իրականացրել համայնքի հողային ֆոնդի նախտակային օգտագործման համար:

Կազմվել է հողային հաշվեկշիռը:

Կոմունալ տնտեսության

և բարեկարգման բնագավառում

1. Կատարվել է համայնքի մի շարք փողոցների լուսավորության համակարգի վերանորոգման աշխատանքներ,
2. Կատարվել է Կոմիտաս և Անդրանիկ փողոցների ջրամղիչ պոմպերի վերանորոգում,
3. Կատարվել է Գինեվետ փողոցի ոռոգման ջրի խողովակի վերանորոգման աշխատանքներ,
4. Կատարվել է Վերֆելի 1-ին փակուղու խմելու ջրագծի նորոգման աշխատանքներ,

5. Կատարվել է համայնքի հասարակական գուգարանի քանդման աշխատանքներ

**Համայնքի ղեկավարի գործննդությունը առևտրի և սպասարկաման
բնագավառում**

Համայնքի ղեկավարի կողմից տրվել է ոգևից խմիչքների, ծխախոտի, վառելիքաքսայուղային նյութերի վաճառքի թույլտվություն:

Հանրային, կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողություն է իրականացվել:

Առողջապահության,

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում

Նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը: Պարբերաբար տարվում են Ֆուտբոլի խաղահրապարակի մաքրման և պահպանման աշխատանքներ:

2014թվականի հունա-հոռնեական ըմբշամարտի պատանիների ՀՀ առաջնությունում առաջին տեղը զրաված համայնքի բնակիչ Էդգար Էդիկի Թամազյանին և Մուրադ Վրեժի Հարությունյանին խրախուսել է՝ տրամադրելով յուրաքանչյուրին 50 000դրամ:

Կրթության, մշակույթի և

նրիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Կանանց միջազգային տոնի կապակցությամբ Ֆրանց Վերֆելի անվան դպրոցի, մանկապարտեզի, փոստի բաժանմունքի, գյուղապետարանի աշխատող կանանց նվիրել է ծաղիկներ և Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի տոմսեր:

Մայիսի 9-ի հաղթանակի օրվա կապակցությամբ միջոցառում է կազմակերպել:

Տրամադրվում է ավտոբուս Մուսալեռի Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոցի սաներին ավտոկանգառից դպրոց և դպրոցից ավտոկանգառ տեղափոխելու համար:

2014 թվականի Ֆր. Վերֆելի անվան միջնակարգ դպրոցի շրջանավարտների ավարտական երեկոյի կազմակերպմանն աջակցելու նպատակով թվով 2 դասարանի տրամադրվել է յուրաքանչյուրին 100 000դրամ:

Մարկապարտեզը աշխատանքային օժժիմը դարձել է 8 ժամյա: Մանկապարտեզի համար ձեռք է բերվել խոհանոցի կահույք, երկաթյա դուռ, կատարվել է հատակի վերանորոգման աշխատանքներ, վերանորոգվել է մանկապարտեզի և զբոսայգու խաղային գույքը: Ձեռք է բերվել սառնարան և խոհանոցային պարագաներ: Մանկապարտեզում պարբերաբար կատարվում է դեռատիզացման, դիզինֆեկցման աշխատանքներ:

Վերանորոգվել է սպորտային հրապարակի ոռոգման համակարգը:

Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառում

Նպաստել է ինքնակամ հողագավթման կանխմանը: Համայնքում կատարվել են կանաչապատման աշխատանքներ:

Առկա հիմնախնդիրները

1. Համայնքը զուրկ է սպորտային և մշակութային օջախներից, ինչը հանգեցնում է երիտասարդությանը նշված ոլորտներից հեռանալուն և դրանից բխող կրթական, դաստիարակչական խնդիրների առաջացմանը:
2. Երևան-Էջմիածին մայրուղու Մուսալեռի հատվածը (600զժմ) չունի լուսավորություն, ինչը պատճառ է հանդիսանում ավտովթարների՝ ընդհուպ մինչև մահվան ելքով:
3. Գյուղում առկա միջհամայնքային ճանապարհը զուրկ է երթևեկության նշաններից, անվտանգ երթևեկություն ապահովելու համար անհրաժեշտ է դրանց տեղադրումը:
4. Համայնքի մի շարք փողոցներ կարիք ունեն բարեկարգման, ասֆալտապատման:

Մուսալեռ համայնքի ղեկավար

17.07.2014թ.



Է. Հովհաննիսյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեի գյուղական
Համայնքի ղեկավարի հաշվետու ժողովի

2014 թվականի հուլիսի 17-ին ժամը 14-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեի գյուղապետարանում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հաշվետու ժողով:

Ժողովին ներկա էին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանման բաժնի պետ՝ Վ. Պետրոսյանը, համայնքի ավագանու անդամները, գյուղապետարանի, մանկապարտեզի աշխատակիցները և համայնքի բնակիչներ:

Համայնքի բնակիչների հուզող հարցերից մեկը իրենց բերքի իրացման հետ կապված խնդիրն է, ակնկալում են մեծ աջակցություն:

Նրանք ցանկանում են, որպեսզի համայնքի բոլոր փողոցները ու ճանապարհները լինեն բարեկարգ, ապահովված լինեն գիշերային լուսավորությամբ: Առավել կարևորեցին Երևան-Էջմիածին մայրուղու լուսավորությամբ ապահովված լինելու հարցը: Կառուցվի կամ վերակառուցվի մշակույթի տունը: Ամբողջովին վերանորոգված լինի սպորտդահլիճը: Միջհամայնքային ճանապարհին տեղադրվի երթևեկության նշաններ, ինչի շնորհիվ կկանխվի անկանոն երթևեկությունը:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց 2014 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքերը, խոսեց հետագա ծրագրերի մասին, պատասխանեց համայնքի բնակիչների հուզող հարցերին:

Նա հայտնեց, որ գյուղապետարանի համար նույնպես առաջնահերթ են համարվում այն աշխատանքների իրագործումը, ինչպիսիք են խմելու ջրագծերի անցկացումը, փողոցների և ճանապարհների բարեկարգումը:

Կրարելավվի համայնքի ֆինանսական վիճակը՝ նկատուտների հավաքագրման մակարդակը բարձրացնելով: Կապահովվի համայնքի բնակիչների սոցիալական պաշտպանվածությունը:

Հնարավորինս կնարաստի գյուղատնտեսության և անասնապահության զարգացմանը: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանն ուղղված միջոցառումներ կկիրառվեն:

Աշխատակազմի քարտուղար

Գ. Մ ո լ ս ա լ ե ո

17.07.2014թ.



Գ. Մարտիրոսյան